Գիտություն

ՓԵՏՐՎԱՐ
№2
(395)
2025 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

«Գիտություն և տեխնոլոգիա. դիմակայելով Հայաստանի մարտահրավերներին» համաժողովը

Ս/թ. փետրվարի 14-15-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում անցկացվեց «Գիտուժ» նախաձեռնության կազմակերպած «Գիտություն և տեխնոլոգիա. դիմակայելով Հայաստանի մարտահրավերներին» խորագրով համաժողովը: Միջոցառման նպատակն էր տարբեր բնագավառների գիտնականների, քաղաքականություն մշակողների և տեխնոլոգիական համայնքի ներկայացուցիչների հետ քննարկել Հայաստանի զարգացման և անվտանգության ապահովման առջև ծառացած մարտահրավերները և գիտության ու տեխնոլոգիայի միջոցով դրանց դիմակայելու հեռանկարները, վեր հանել խնդիրները:

Համաժողովի մասնակիցներին ողջունեց Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ Բրյուս Պողոսյանը: «Հայաստանը պետք է արագ դառնա անվտանգ, գիտելիքի վրա հիմնված երկիր: 21-րդ դարում սա ազգային գոյատևման և զարգացման միակ ճանապարհն է: Մեզ անհրաժեշտ են բարձրակարգ գիտնականներ և ինժեներներ՝ զինված նորագույն գիտելիքներով: Պետք է պայմաններ ստեղծվեն, որպեսզի ունենանք գիտական առաջընթացին նպաստող միջավայր»,- ասաց Բրյուս Պողոսյանը:

Համաժողովի առաջին օրվա թեմաները նվիրված էին հումանիտար և հասարակական գիտությունների ոլորտին: Հայաստանի մարտահրավերները և զարգացման տեսլականը քննարկեցին Մյունստերի համալսարանի պրոֆեսոր Զարեհ Ասատրյանը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Հրանուշ Խառատյանը, հայերենագետ Հրաչ Մարտիրոսյանը, պատմաբան-ցեղասպանագետ Սուրեն Մանուկյանը, մատենագետ Մերուժան Կարապետյանը:

Խոսնակները նաև քննարկեցին հումանիտար և հասարակական գիտությունների ոլորտում կիրառականության խնդիրները: Իսկ գիտական քաղաքականության հարցերը քննարկեցին Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի տվյալների հավաքագրման և վերլուծության բաժնի պետ Սմբատ Հակոբյանը, ԵՊՀ սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնի վարիչ Հարություն Վերմիշյանը, ԵՊՀ դասախոս Սոնա Մանուսյանը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Աղասի Թադևոսյանը:

Միջազգայնացման հարցերը քննարկեցին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Արսեն Բոբոխյանը, ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի էթնոգենոմիկայի լաբորատորիայի վարիչ Լևոն Եպիսկոպոսյանը, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Էդիտա Գզոյանը, ՀԱՀ դասախոս Արշակ Բալայանը, ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող Նարեկ Սուքիասյանը:

Համաժողովի շրջանակներում փետրվարի 15-ին տեղի ունեցավ «Գիտություն և տեխնոլոգիա, ռազմավարական նպատակներ» թեմայով զրույց ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Հակոբ Արշակյանի հետ: Զրույցը վարեց «Գիտուժ» նախաձեռնության անդամ, «Robomart» ընկերության համահիմնադիր և գլխավոր տեխնոլոգիական տնօրեն Տիգրան Շահվերդյանը: Հակոբ Արշակյանն իր խոսքում մասնավորապես անդրադարձավ ՀՀ վարչապետին կից ստեղծված գիտության և տեխնոլոգիաների զարգացման խորհրդի գործունեությանը:

Խորհրդի առաքելությունն է նպաստել Հայաստանի Հանրապետության գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության, մաթեմատիկայի ուղղությամբ կրթության, կիրառական գիտության և տեխնոլոգիաների զարգացմանը, նշված ուղղություններով իրականացվող պետական ծրագրերի արդյունավետության բարձրացմանը և փոխկապակցված զարգացման մեխանիզմների ներդրմանը, ինչպես նաև նոր պետական ծրագրերի մշակմանը, գիտատեխնոլոգիական զարգացման ռազմավարության մշակմանը և ներդրմանը:

Հակոբ Արշակյանը նշեց, որ Խորհրդում ձևակերպվել է, որ կրթության, գիտության և արդյունաբերության ոլորտների համար ենթակառուցվածքային, գիտելիքների, մարդկային ռեսուրսների ուղղությամբ համակարգային ծրագրեր պետք է մշակվեն: «Խորհրդի միջոցով պետք է առաջադրվեն պետական ծրագրեր: Այդ ծրագրերն ամեն մի նախարարություն իր բյուջետային տողով պիտի ֆինանսավորի: Արդյունաբերությանը, կրթությանը և գիտությանը պետք է հավասարապես ուշադրություն դարձնել, որովհետև դրանք իրար հաջորդում և լրացնում են»,-ասաց նա:

Անդրադառնալով գիտության և տեխնոլոգիայի ոլորտներին տրված ֆինանսների ծախսման արդյունավետության հարցին՝ նա ասաց. «Իրականում խնդիր գոյություն ունի: Մենք, ֆինանսավորում բարձրացնելով, հենց ամենասկզբում որոշ մեխանիզմներ զարգացրել ենք, որոշ մեխանիզմներ դեռ չենք զարգացրել: Եվ դրա վրա մենք պետք է կենտրոնանանք: Կարողությունների զարգացման խնդիր ունենք: Այդ բացը լրացնելու համար և մենք պետք է պրոակտիվ ջանքեր ձեռնարկենք, և՛ գիտական, և՛ թե արդյունաբերական համայնքը: Մենք այդ քայլերն արել ենք: 5 ուղղությունները, ըստ էության, Խորհրդի շրջանակներում ամրագրել ենք, և նաև որոշ առումով ռազմավարական ծրագրեր են առաջադրվել այդ ուղղություններով: Հիմա մենք փորձում ենք դա վերածել պետական զարգացման

ծրագրերի»,- ասաց Հակոբ Արշակյանը:

Զրույցին հաջորդեց «Գիտություն և տեխնոլոգիա, նպատակների իրականացման ճանապարհներ» թեմայով պանելային քննարկումը: Բանախոսներն էին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանը, «Modex» խորհրդատվական ընկերության տնօրեն Հայկազ Ֆանյանը, ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փոխնախագահ Արթուր Մովսիսյանը և «Գիտուժ» նախաձեռնության անդամ, Robomart ընկերության համահիմնադիր և գլխավոր տեխնոլոգիական տնօրեն Տիգրան Շահվերդյանը: Մոդերատորը «Գիտուժ» նախաձեռնության անդամ, «Earlyone»-ի և «Limetech»-ի հիմնադիր Գևորգ Սաֆարյանն էր:

Պանելային քննարկման ընթացքում բանախոսներն անդրադարձան գիտության ոլորտի ռազմավարության բացակայության հարցին, ակադեմիական քաղաքի ստեղծման վերաբերյալ մտահոգություններին, Գիտությունների ազգային ակադեմիայի բարեփոխումների անհրաժեշտության, «Գիտուժ» նախաձեռնության դերի և գործունեության հարցերին:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանը նշեց, որ ԳԱԱ ղեկավարությունը մշակել է ակադեմիական համակարգի բարեփոխումների առաջարկներ և ներկայացրել ՀՀ կառավարություն: Նա հիշեցրեց, որ ԳԱԱ-ն ՀՀ կառավարության հիմնադրած կառույց է, և շատ դեպքերում այդ կառույցի գործունեությունը կարգավորվում է միայն կառավարության որոշումներով:

«Ակադեմիայի կանոնադրությունը չի կարող հաստատվել առանց կառավարության որոշման, իսկ այդ կանոնադրությունն այսօր թույլ չի տալիս անել փոփոխություններ: Օրինակ, մենք այս պահին ունենք հինգ բաժանմունք, որոնք խիստ տկարացած են, մարդկային ռեսուրսը բավարար չէ ձեռնարկելու համար լրջագույն ծրագրեր: Համաձայն գործող օրենքի՝ երեք տարին մեկ պետք է տեղի ունենային ակադեմիայի ընտրություններ, սակայն արդեն 10 տարուց ավելի դրանք տեղի չեն ունեցել: Այսօր ակադեմիայի անդամների միջին տարիքը 80-ին մոտ է, և ակնհայտ է, որ գիտական կառույցը երիտասարդացման խնդիր ունի: Մենք կարիք ունենք ունակ, գիտության երիտասարդ մենեջերների ներգրավման: Այս գիտակցությամբ, անշուշտ, ակադեմիայի ղեկավարությունը ձեռնարկել է համապատասխան փաթեթի մշակում, բարձր չափորոշիչներով ընտրություններ իրականացնելու, և դա կախված է մնացել օդում: Կառավարության կողմից արձագանք չկա»,- ասաց Արթուր Իշխանյանը:

Նա նշեց, որ ԳԱԱ-ն առաջարկել է նաև օպտիմալացնել ինստիտուտները միավորման ճանապարհով, բայց դա ևս հնարավոր է միայն ՀՀ կառավարության որոշմամբ: Արվել են նաև ԳԱԱ կառավարման համակարգի սխեմայի փոփոխության, ատեստավորման կարգի մասին, Ակադեմիական քաղաքի վերաբերյալ առաջարկներ: Սակայն պատասխաններ չեն ստացվել:

«Շատ ժամանակ ասում են. դա քաղաքական որոշում է: Այդ քաղաքական որոշումը պետք է հիմնված լինի քննարկումների վրա: Առավել ևս, այսպիսի ծանր աշխարհակարգային փոփոխությունների պարագայում որևէ լրջագույն ռեֆորմի հաջողության հասնելու գրավականը լայն հասարակական կոնսենսուսն է, որը կարող է ձևավորվել հասարակական քննարկումների և շահագրգիռ կողմերի համաձայնության պարագայում»,- ասաց Արթուր Իշխանյանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Կնքվեց ռազմավարական համագործակցության հուշագիր

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Գոհար Իսկանդարյանը և ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Գոռ Ծառուկյանը կնքեցին ռազմավարական համագործակցության մասին հուշագիր:

Հուշագրի շրջանակում կողմերը կհամագործակցեն մասնագիտական-փորձագիտական աջակցության և խորհրդատվության տրամադրման նպատակով: Արևելագիտության ինստիտուտի երիտասարդ հետազոտողները հնարավորություն կունենան՝ ներգրավվելու պետական տեղեկատվական քաղաքականության տարբեր ոլորտներում իրականացվող աշխատանքներում, իսկ «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետներին կտրամադրվի աջակցություն՝ արևելագիտության ոլորտում գիտական գործունեություն ծավալելու համար:

Երկու կառույցները կմշակեն և կիրականացնեն համատեղ նախագծեր արդիական հարցերի շուրջ, կկազմակերպեն գիտաժողովներ, ֆորումներ, սեմինարներ, ամառային և ձմեռային դպրոցներ, կլոր սեղաններ ու վարպետաց դասեր: Նախատեսվում է նաև երկկողմ աջակցություն գիտավերլուծական աշխատանքների հանրայնացման հարցում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտագետները Ճվեյցարիայում

Ս.թ. հունվարի 9-11-ը Ժնևի ու Լոզանի համալսարաններում տեղի ունեցավ Հայկական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության (AIEA) 16-րդ գլխավոր համաժողովը, որի աշխատանքներին մասնակցեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի պատվիրակությունը:

Երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աննա Արևշատյանի** «Տիգրան Մանսուրյանի նորօրյա շարականերգությունը» (ֆրանսերեն) զեկուցումը նվիրված էր հայ ժամանակակից երաժշտության ականավոր ներկայացուցիչ Տիգրան Մանսուրյանի վերջին տասնամյակների այն երկերին, որոնցում տեղ են գտել կոմպոզիտորի ոճական զարգացման ուշագրավ դրսևորումները՝ շրջադարձ դեպի հայ հոգևոր երգարվեստը և պոեզիան: Մասնավորապես առաջին անգամ քննվել են Ներսես Շնորհալու խոսքերով գրված «Հավատով խոստովանիմ» աղոթաշարի երկրորդ տետրը (2018) և «Օրհներգ-Նավապետ բարի»՝ ըստ Մաշտոցի ապաշխարության շարականի (2021), մեծակտավ գործերը բարիտոնի, խառը երգչախմբի և նվագախմբի համար: Բանախոսի կարծիքով, չդիմելով երաժշտական մեջբերումներին, Մանսուրյանը ստեղծել է մի նոր շարականերգություն, որի երաժշտական լեզուն որքան արդիական է, նույնքան էլ՝ ազգային: Եվ այդ երկերում հայ երաժշտության ավանդական հինավուրց ելևէջները զուգորդվում են ժամանակակից հնչյունային ընկալումների և կոմպոզիտորի անհատական ոճի հետ:

«Հայ երաժշտարվեստի մեկնությունները օտար աղբյուրներում» (անգլերեն) բանախոսության մեջ Երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Լիլիթ Երնջակյանը**, ամփոփ անդրադառնալով հայ-թուրքական երաժշտական կապերի բարդ և վիճահարույց բնույթին, ներկայացրել է հայ ավանդական երաժշտության ժանրային համակարգի ծագումնաբանական խնդիրներն ու զարգացման առանձնահատկությունները Մերձավոր Արևելքի մշակութային համատեքստում: Բանախոսը լուսաբանել է օտարալեզու (մասնավորապես թուրք-ադրբեջանական) աղբյուրներում 20-րդ դարի սկզբին ձևավորված և առ այսօր շրջանառվող այսպես կոչված ժխտողական դիսկուրսի հիմքերն ու հեռահար նպատակները, որոնք միտված էին հայ ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտարվեստի դերի և նշանակության անտեսմանն ու խեղաթյուրված մեկնաբանմանը, ինչպես նաև շոշափել արևմտյան որոշ հետազոտություններում հայ երաժշտությանն ու կոմպոզիտորական արվեստին առնչվող կամայական և հակագիտական քննարկումների հարցերը, որոնք թուրքական դիսկուրսի ժամանակակից արձագանքներն են և յուրովի խաթարում են հայ երաժշտարվեստի էթնոմշակութային նկարագիրը:

«Հայկական վերածննդի նախադրյալները քերականական մեկնություններում» զեկուցման մեջ Երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Միհր Նավոյանը** հակիրճ անդրադարձել է հայկական վերածննդի ուսումնասիրության պատմությանը՝ նկատելով, որ հայկական վերածննդի դրսևորման առանցքային ոլորտներից մեկը հայ միջնադարյան երաժշտաբանաստեղծական արվեստն է: Միջնադարի երաժշտաբանաստեղծական միակառույց մշակութային իրողությունից արհեստականորեն դուրս է թողնվել նրա երաժշտական բաղադրիչը՝ շեշտելով սոսկ բանաստեղծությունը: Նավոյանը կարևորել է միջնադարյան տեսական բնույթի այն հուշարձանները, որոնք հայ միջնադարյան երաժշտաբանաստեղծական արվեստի՝ խնդրին առնչվող հարցերը ներկայացնում են համածույլ: Քերականական մեկնություններից բանախոսը հատկապես անդրադարձել է վաղմիջնադարյան փուլի հայ քերականական մեկնություններից որոշ ձևակերպումների, որոնք կարող են վկայել աշխարհիկ արվեստի ինքնուրույնացման մասին, և որպես եզրահանգում նկատել է, որ վաղմիջնադարյան հայ մեկնիչների կողմից առաջարկվող մեթոդի ընդհանուր բնութագիրը «Հագներգություն» և «Քաջոլորակ» եզր-հասկացությունների տեսանկյունից դիտարկելիս, ի վերջո, հանգում են հայկական վերածննդի գաղափարին:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

Առաքելոց վանական համալիրն ու բնակատեղին ընդգրկվել են Եվրոպայի 14 ամենավտանգված ժառանգության վայրերի ցանկում

Եվրոպական ժառանգության «Եվրոպա Նոստրա» քաղաքացիական հասարակության առաջատար ցանցն ու Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) ինստիտուտը հրապարակել են Եվրոպայի 14 հուշարձանների ու ժառանգության վայրերի անունները, որոնք ընդգրկվել են 2025 թվականի «Յոթ ամենավտանգված» ծրագրի կարճ ցանկում: Ցանկ են ներառվել նաև Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կիրանց գյուղի մոտ գտնվող Առաքելոց վանական համալիրն ու բնակատեղին:

Հիմնադրումից ի վեր (2013 թ.) այս ծրագիրը քաղաքացիական հասարակության առաջատար նախաձեռնություն է՝ ուղղված Եվրոպայի վտանգված ժառանգության պաշտպանությանը:

Համաձայն «Եվրոպա Նոստրա» կազմակերպության հաղորդագրության՝ վտանգված ժառանգության 14 վայրերը, որոնք ներկայացնում են եվրոպական 14 երկիր, ընտրվել են միջազգային խորհրդակցական խմբի կողմից: Խմբում ընդգրկված են պատմության, հնագիտության, ճարտարապետության, նախագծերի վերլուծության փորձագետներ, տնտեսագետներ:

Ընտրությունը կատարվել է՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր վայրի եզակիությունը, առկա վտանգները, մշակութային արժեքի կարևորությունը:

Եվրոպայում «Յոթ ամենավտանգված» ժառանգության վայրերի՝ 2025 թվականի վերջնական ցանկը կհրապարակվի ապրիլին:

Առաքելոց վանական համալիրը և բնակատեղին

Թաքնված Հայաստանի հյուսիսում՝ Տավուշի անտառներում, Առաքելոց վանական համալիրն ու բնակատեղին միջնադարի կրոնական ու աշխարհիկ ժառանգության յուրօրինակ գոհարներ են: Աճարկուտ գյուղից երկու կիլոմետր դեպի արևմուտք՝ Կիրանց գետի երկայնքով ձգվող այս հուշարձանախումբը 13-րդ դարի մշակութային և տնտեսական կյանքի շքեղ մի գանձարան է: Մեկուսի դիրքն ու հայ-ադրբեջանական սահմանակցությունը փաստում են համալիրի պատմական, աշխարհաքաղաքական կարևորության մասին:

Համալիրի զարդը գլխավոր եկեղեցին է՝ բոլորված պարսպով ու աշտարակներով, ճարտարապետական նուրբ լուծումներով գմբեթավոր դահլիճն ու կից գավիթը՝ հայկական ավանդական «հազարաշեն» տանիքով ու Սուրբ Սարգսի որմնանկարով՝ եզակի իր տեսակի մեջ ու հավատարիմ Հայ առաքելական եկեղեցու ավանդույթներին: Բնակավայրում նշմարելի են ոչ միայն եկեղեցիների հետքեր, այլև Մետաքսի ճանապարհի վրա գտնվող առևտրային երբեմնի աշխույժ այս կենտրոնի քարավանատները, ձիթհանքն ու Սրանոց կամուրջը:

Որպես վանական կալվածք ազատված լինելով հարկերից՝ կրոնականի ու աշխարհիկի համակեցության այս օրինակը հայ-վրացական մշակութային փոխազդեցության ուշագրավ ժառանգություն է՝ կերտված Զաքարյանների իշխանության և մոնղոլական տիրապետության տարիներին: Չնայած պատմական իր նշանակությանը՝ բնակատեղին լքվել է 17-րդ դարից: Մինչ օրս այն պատշաճ ուսումնասիրված չէ:

Քայքայվող հիմնապատերը, փոփոխվող կլիման, առատ տեղումներն ու հեղեղների վտանգները, սեյսմիկ ակտիվ գոտում գտնվելու հանգամանքն ու երկրաշարժերից վնասված շինությունները հավելյալ մարտահրավերներ են հուշարձանախմբի համար: Մարդկային գործոնը ևս տեսանելի է՝ գրաֆիտի, հանգստի երկու ընդարձակ գոտի, չպահպանվող տարածք:

Առաքելոց վանական համալիրն ու բնակատեղին «Յոթ ամենավտանգված» ժառանգության վայրերի ծրագրում առաջադրել է Ավստրիայի Զալցբուրգի համալսարանի Քրիստոնյա Արևելքի ուսումնասիրությունների կենտրոնի հայագիտության բաժնի դոկտոր Յասմին Դում-Թրագուտը:

Ծրագիրը ենթադրում է Առաքելոց վանական համալիրի ու բնակատեղիի ամբողջական հետազոտություն, տարածքի բարեկարգում ու պահպանություն, ինչպես նաև կայուն էկոտուրիզմի զարգացում:

«Յոթ ամենավտանգված» ծրագրի միջազգային խորհրդակցական խումբը նշում է. «Առաքելոցը միջնադարյան նշանակալի մի հուշարձանախումբ է, որում արտացոլված են դարաշրջանի մշակութային երկակիությունն ու խաղաղ գոյակցությունը: Այդուհանդերձ, անկայունությունը համալիրի շուրջ՝ պայմանավորված աշխարհաքաղաքական լարվածությամբ և բնապահպանական խնդիրներով, անհապաղ միջամտություն է պահանջում: Առաքելոց վանական համալիրի ու բնակավայրի վերականգնումն ու հանրահռչակումը կարող են հաշտեցման, տարածաշրջանային կայունության և կայուն զարգացման խթան լինել՝ ժառանգությունը խաղաղության և առաջընթացի ռեսուրսի վերածելու ուղի նախանշելով»:

ՀՀ ԳԱԱ «ԳԵՂԱՐԴ» ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

(Ակադեմիկոս Մանուկ Աբեղյանի ծննդյան 160-ամյակի առթիվ)



2025 թ. մարտին լրանում է հայ խոշորագույն գիտնական Մ. Աբեղյանի ծննդյան 160-ամյակը: Նրա գիտական ժառանգությունը վերաբերում է հայագիտության մի քանի ոլորտների: Մեծ է ավանդը նաև մանկավարժության ասպարեզում: Հայրենի գիտությանն իր նվիրումի համար 1935 թ. արժանացել է գիտության վաստակավոր գործչի կոչման: 1943 թ. նա ընդգրկվել է Հայաստանի նորաստեղծ գիտությունների ակադեմիայի հիմնադիր անդամների կազմում:

Մ. Աբեղյանը ծնվել է 1865 թ. մարտի 17-ին Նախիջևանի Թազաքենդ գյուղում: Հիմնական կրթությունը ստանում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Ավարտելուց հետո մանկավարժական գործունեություն է ծավալում ճեմարանում, Շուշիի թեմական դպրոցում, Թիֆլիսի Հովնանյան օրիորդաց վարժարանում, ակտիվորեն մասնակցում է կազմակերպվող գրական-հրատարակչական աշխատանքներին, կատարում թարգմանություններ եվրոպացի և ռուս հեղինակներից:

Աբեղյանի ուսումնառությունը բարերար Ալեքսանդր Մանթաշյանի հովանավորությամբ շարունակվում է Եվրոպայում՝ Ենայի, Լայպցիգի, Բեռլինի, Սորբոնի համալսարաններում (1893-1896): 1898 թ. Ենայի համալսարանում պաշտպանում է «Հայ ժողովրդական հավատքը» թեմայով ատենախոսությունը և ստանում փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Վերադառնում է Թիֆլիս, ապա մեկնում Էջմիածին Գևորգյան ճեմարանից ստացած հրավերով:

Ճեմարանում Աբեղյանը դասավանդում է մի քանի առարկա՝ հայոց լեզու, հայ հին ու նոր գրականության պատմություն, գրականության տեսություն, եվրոպական գրականություն, Հայաստանի աշխարհագրություն, հայոց պատմություն, գերմաներեն, հայոց լեզվի տաղաչափություն և իր կողմից առաջարկված «Ժողովրդական բանահյուսություն» առարկան:

1914 թ. նորից մեկնում է Թիֆլիս, դասավանդում մի քանի հաստատություններում: Միևնույն ժամանակ ծավալում է հասարակական ակտիվ գործունեություն, դառնում է Հայ գրողների կովկասյան և Հայոց ազգագրական ընկերությունների անդամ, ներգրավվում է Թումանյանի ջանքերով ստեղծվող Հայկազյան ընկերության կազմակերպման աշխատանքներում, որի հիմնական նպատակներից մեկը Հայոց ակադեմիայի, հայկական համալսարանի հիմնումն էր: Կարդում է դասախոսություններ՝ նվիրված հայ հին գրականությանը, հայոց լեզվի զարգացման հարցերին, հոդվածներով արձագանքում հասարակական կյանքում տեղի ունեցող երևույթներին, քաղաքական իրադարձություններին:

1918-1920 թթ. Մ. Աբեղյանը ձեռնամուխ է լինում պետական գրական լեզվի մշակման խնդիրներին: Մեծապես իր նպաստն է բերում իրավաբանական, ռազմական, բժշկական տերմինաբանության կազմման գործում: 1921 թ. կազմվում է հայոց լեզվի ուղղագրության բարեփոխման հանձնաժողովը Մ. Աբեղյանի գլխավորությամբ: Մի շարք հոդվածներով ու գրքերով Աբեղյանը գիտականորեն հիմնավորում է նոր ուղղագրության դրույթները:

1918 թ. սկսվել էին Երևանի համալսարանի կազմակերպման աշխատանքները, որոնց մասնակցում է նաև Աբեղյանը: Դասավանդում է հայ ժողովրդական բանահյուսություն, հայ հին գրականություն, հայոց լեզվի տեսություն: 1923-1925 թթ. ստանձնում է պատմաբանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնը: 1921 թ. նրան շնորհվում է դոցենտի, իսկ 1926 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում:

Շատ ջանքեր ու նվիրում էին գիտնականից պահանջում նաև 1925 թ. բացված գիտության և արվեստի ինստիտուտի հետ կապված աշխատանքները, որ հինգ տարի շարունակ իրականացնում է նա իբրև ինստիտուտի խորհրդի նախագահ: 1930 թ. Աբեղյանը դառնում է պատմության և գրականության ինստիտուտների նախագահության անդամ: 1931 թ.-ից Աբեղյանը լիարժեքորեն զբաղվում է գիտական աշխատանքներով՝ թողնելով մանկավարժական գործունեությունը:

Դեռ Գևորգյան ճեմարանում ուսանելու տարիներին Աբեղյանը հավաքում,գրի է առնում հայ ժողովրդի բանավոր ստեղծագործության նմուշները, ձեռնամուխ լինում դրանց քննությանը:

Նշանակալից է գիտնականի ներդրումը հայ ժողովրդի ազգային էպոսի՝ «Սասնա ծռեր»-ի ուսումնասիրման, հրատարակման գործում: «Ազգային վեպ» (1889) ուսումնասիրության մեջ Աբեղյանը մշակում է իր տեսական դրույթները էպոսի պատմական ատաղձի, աստվածաշնչյան զրույցի տեղայնացման ու զարգացման վերաբերյալ: «Հայ ժողովրդական վեպը» հետազոտությունը (1906-1908) բացահայտում է էպոսի ծագման սոցիալ-պատմական շարժառիթները, տարբեր դարաշրջաններին առնչվող շերտավորումները: «Մատենագիտություն «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի մասին» աշխատանքը (1939) էպոսին վերաբերող հրապարակումներին (1874-1939թթ.) տրված ընդգրկուն գնահատական է:

Ազգագրական խնդիրներին նվիրված աշխատություններում՝ «Հայ ժողովրդական հավատքը» (1898), «Վիշապներ» (1941), Աբեղյանը հայկական ժողովրդական հին ու նոր հավատալիքները քննում է՝ կապելով հայ ժողովրդի ապրած կյանքի իրական երևույթների հետ: Ազգագրական խնդիրներին զուգահեռ գիտնականին հետաքրքրում են նաև հայկական առասպելներն ու վիպական պատումները: Խորաքնին հայացքով, փաստական հենքով կատարված ուսումնասիրությամբ՝ «Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ» (1899), Աբեղյանը հստակորեն տարորոշում է Խորենացու գրքում բերված հնագույն առասպելներն ավելի ուշ ստեղծված վիպական պատմական զրույցներից:

Գրավոր ու բանավոր ավանդված ողջ ժառանգությունը Աբեղյանն իր «Հայ վիպական բանահյուսություն» աշխատության մեջ բաժանում է վիպական 5 շրջանների՝ հմայական աղոթքներ ու առասպելներ, առասպելախառն վեպ՝ «Վիպասանքը», «Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ», «Սասնա ծռեր» վեպերը՝ ընդգծելով բոլորին կապող ընդհանրական հատկանիշը՝ օտար հարստահարիչների դեմ հայ ժողովրդի ազգային ինքնության, ազատության և ինքնապաշտպանության համար մղած դարավոր կռիվների թեման:

Աբեղյանը նույն ոգևորությամբ ուսումնասիրում է հայ քնարական բանահյուսությունը: Նախ նա Կոմիտասի հետ քննական մոտեցմամբ կազմում է «Հազար ու մի խաղ» երգարանը՝ գալիք սերունդներին ավանդելու ժողովրդական հարստությունը: Միևնույն ժամանակ հանդես է գալիս հոդվածներով՝ բարձր գնահատելով Կոմիտասի նվիրումը հայ երաժշտությանը և քննադատելով նրան ուղղված մեղադրանքները:

1904 թ. «Արարատ» ամսագրում տպագրվում է Աբեղյանի «Ժողովրդական խաղեր» ուսումնասիրությունը՝ նվիրված հայ ժողովրդի գյուղական սիրերգերին: Աբեղյանն անդրադառնում է խաղիկների թեմատիկ, կառուցվածքային, հորինվածքային առանձնահատկություններին, կրած փոխակերպություններին և ժողովրդական երգերը գնահատում իբրև հասարակական գիտակցության գեղարվեստական դրսևորումներից մեկը:

Աբեղյանը վերլուծության նույն սկզբունքներն է կիրառում հին գուսանական երգերը ուսումնասիրելիս: Նա բազմաթիվ փաստարկներով հայրենները դիտարկում է իբրև կոլեկտիվ ժողովրդական ստեղծագործություններ, բազմաթիվ զուգադրություններով ընդգծում է ժողովրդական երգերի ու հայրենների ընդհանրությունները:

Աբեղյանի «Գրական դպրոցներ» աշխատությունը (1885-1897) ամբողջական տեսություն է գրականագիտական խնդիրների շուրջ՝ ձևավորված եվրոպական գրականագիտության մշակած օրինաչափություններով: Նա կարևորում է գեղարվեստական երկի ձևի ու բովանդակության համապատասխանության, գրական ազդեցությունների, կյանքի ու գրականության փոխադարձ կապի խնդիրները: Աբեղյանը ստեղծագործությունը համարում է հեղինակի ապրած ժամանակաշրջանի հասարակական կյանքի արտահայտություն, ստեղծագործության հաջողության գրավականը՝ ընդհանուր մարդկայինն արտահայտելու կարողություն: Գիտական այդ չափանիշներով էլ նա հետազոտում է հայ հին ու նոր գրականությունը, ցույց տալիս նրանց ձևավորման ընթացքն ու զարգացման միտումները՝ բանասեր, բանագետ Ս. Հարությունյանի ձևակերպմամբ՝ «ստեղծելով իր գրա-պատմական դարակազմիկ համակարգն ու տեսությունը հայագիտության մեջ»: «Հայոց հին գրականության պատմության» հատորներում (1944, 1946) Աբեղյանը ներկայացնում է հայ հին գրականությունը զարգացման ամբողջական պատկերով: Այդ ընթացքի հարացույցում տեսանելի է՝ ինչպես է «ինքնատիպ կերպարանքից զուրկ» (Աբեղյանի բնորոշումն է) դպրությունն աստիճանաբար ձեռք բերում ինքնատիպ ազգային բնույթ, ինչպես են ստեղծագործություններում արտացոլվում ազգային բնավորության ու հոգեբանության տիպական գծերը:

Կուռ տրամաբանությամբ, գիտական-տեսական ամուր հենքով են աչքի ընկնում Աբեղյանի լեզվաբանական-քերականական աշխատությունները ևս: Նա քննում է արդի հայերենի հնչյունական համակարգը, իմաստաբանական փոփոխությունները, բառակազմական օրինաչափությունները, ձևաբանությանն առնչվող բազմաթիվ հարցեր՝ օգտագործելով նախորդ քերականների ձեռքբերումները, ստեղծում է աշխարհաբարի շարահյուսության համակարգը, որի բացառիկ նշանակությունը հայերենի քերականության պատմության մեջ ընդգծել են հայ և օտարազգի բազմաթիվ հայագետներ:

Մեծ է Աբեղյանի ներդրումը նաև հայ տաղաչափության ուսումնասիրության գործում: Նա մի քանի ընդարձակ աշխատություններ է գրել բանավոր և գրավոր պոեզիայի տաղաչափական առանձնահատկությունների ու օրինաչափությունների վերաբերյալ՝ «դառնալով մեր բանասիրության մի առանձին ճյուղի իսկական հիմնադիրը» (Էդ. Ջրբաշյան):

Մնայուն արժեք ունեն Աբեղյանի կազմած կամ իր խմբագրությամբ լույս տեսած սկզբնաղբյուր-բնագրերը՝ «Դավիթ և Միերը» (1888), Մովսես Խորենացու «Հայոց պատմության» (1913), Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի (1941), «Սասնա ծռեր»-ի (1936, 1944-1951) գիտական հրատարակությունները, էպոսի համահավաք բնագրի առաջին ճյուղը (1939), «Ժողովրդական խաղիկները» (1940), «Գուսանական ժողովրդական տաղեր, հայրեններ, անտունիներ» (1940) ժողովածուները:

Մ. Աբեղյանի մեծարժեք ժառանգությունը հիմնական մասով ընդգրկված է ութ ստվարածավալ հատորներում, որ կազմել և տպագրել է գիտնականի անունը հպարտությամբ կրող Գրականության ինստիտուտը (1944 թ.-ից): Բանաստեղծ Ավ. Իսահակյանի ձևակերպմամբ՝ Աբեղյանը «...իր մոնումենտալ երկերով կառուցեց իր հավերժական արձանը մեր կուլտուրայի ու մեր սրտերի մեջ»:

Հայագիտության մեծ երախտավորի հասարակական, մանկավարժական, գիտական գործունեությունն անձնուրաց նվիրումի վառ օրինակ է հարազատ ժողովրդին ու երկրին, ազնիվ, սկզբունքային, բարեխիղճ, անաչառ, մտավորականի նկարագիրը՝ մշտապես ուսանելի սերունդների համար:

Հերիքնազ ՈՐՍԿԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ-ն մեկնարկել է «Գիտությունը մարզերում» ճանաչողական այցերի շարք

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան մեկնարկել է ճանաչողական այցերի շարք՝ «Գիտությունը մարզերում» խորագրով: Նպատակն է Հայաստանի տարբեր համայնքներում երիտասարդների և դպրոցականների շրջանում ներկայացնել գիտության ժամանակակից ձեռքբերումները, ծանոթացնել նոր տեխնոլոգիաներին, հիմնարար և կիրառական գիտության խնդիրներին՝ նրանց ներգրավելով գիտական միջավայր:

Առաջին այցը կատարվեց ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո բնակավայրի միջնակարգ դպրոց: Այստեղ ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի գիտաշխատողներ Արմեն Սարգսյանը և Գագիկ Միքայելյանը, ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի գիտաշխատող Էլյա Սաֆարյանը դպրոցականներին ներկայացրին բակտերիաների և մանրէների հետ կապված ժամանակակից հետազոտություններ, այդ թվում՝ կապված գենային ճարտարագիտության և սպիտակուցների սինթեզի գործընթացում պլազմիդների օգտագործման հետ:

Լուսանկարներում դպրոցականները թողնում են իրենց մատնահետքերը Պետրի թասիկում, որն իր հերթին առաջացնում է «մանրէային հետք»: Երիտասարդ գիտնականները գիտափորձերի միջոցով աշակերտներին ծանոթացրին այն տեխնոլոգիաներին, որոնք կիրառվում են կինոարտադրության մեջ:

Երիտասարդ գիտնականների ճանաչողական այցերը Հայաստանի տարբեր համայնքներ կշարունակվեն ամբողջ տարվա ընթացքում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

«Ինչպես արժիվ սավառնում ես լեռ ու ժայռ...»

2025 թ. փետրվարի 25-ին լրանում է հայ ազգային-ազատագրական պայքարի ականավոր գործիչ, գեներալ Անդրանիկ Օզանյանի ծննդյան 160-ամյակը: Հայ ժողովրդի ամենասիրելի զավակներից մեկի անունը, հիրավի, կապրի դարեդար: Ընթերցողին ենք ներկայացնում հայոց մեծ զորավարի խորիմաստ ասույթներից մի քանիսը:

● Ես իմ կյանքում երբեք չեմ ձգտել անձնական երջանկության ու բարօրության: Ես մշտապես ձգտել եմ միայն մի բանի և պայքարել եմ մի բանի՝ իմ հարազատ ժողովրդի ազատության ու բարեկեցության համար: Ես չեմ փնտրում իմ վաստակի գնահատականը և ցանկանում եմ միայն այն, որ երջանիկ լինի այն ժողովուրդը, որին ես ծառայում եմ ամբողջ կյանքում:

● Ամեն հայ, եթե միմիայն իր համար ապրելու մասին չմտածեր, մեր աղետների մեծ մասը պակաս կլիներ:

● Ամեն օր ձեր գլուխը բարձին դնելուց ու քնելուց առաջ հիշե՛ք, թե այդ օրը ի՞նչ եք արել ձեր ազգի համար:

● Հայն իր կյանքը պաշտպանելու մեկ միջոց ունի միայն, մեկ պաշտպան, այն էլ զենքն է ու զինավարժությունը:

● Դավաճան է նա, ով չի սթափվում, դավաճան է նա, ով չի լսում ահազանգը: Ով չի տեսնում մեր պաշտելի նահատակների ստվերը:

● Մի՛ վստահեք, հույս մի՛ կապեք օտարների խոստումներին: Մեր պայքարը պետք է հյուսել ժողովրդի ուժից:

● Ես իմ վաստակիս գնահատական չեմ փնտրում, ցանկանում եմ, որպեսզի երջանիկ լինի այն ժողովուրդը, որին ծառայում եմ ողջ կյանքում:

● Իմ կուսակցությունը իմ ժողովուրդն է...

● Եթե կուզեն ինձ պատիվ անել, ես իմ արձանը չեմ ուզում, փառավոր թաղում չեմ ուզում: Թող հայ ժողովուրդը կանգնեցնի ավերակ դարձած Առաքելոց վանքը և այնտեղ փոքրիկ ուսումնարան կառուցի հայ մանուկների համար: Այս է իմ ամբողջ բաղձանքս և բարոյական պահանջս հայ ժողովրդից:

● Գործս կիսատ մնաց... (Զորավարի վերջին խոսքերը մահվանից առաջ, 31 օգոստոսի, 1927թ.):

Երիտասարդ գիտնականի ամբիոն

Աշխեն Գևորգյան

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի հայցորդ Աշխեն Գևորգյանը և Թուրքիայի բաժնի գիտաշխատող Վերոնիկա Թորոսյանն ուսումնասիրում են 2020 թվականի Արցախյան պատերազմից հետո Իրանի և Թուրքիայի մրցակցային քաղաքականությունը տարածաշրջանում, դրա հետևանքները տարածաշրջանի և Հայաստանի համար:

«Iran-Turkey Competitive Policy in the South Caucasus: Armenia's Security Risks and Opportunities» թեմայով նրանք ճանաչվել են «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» շրջանակում իրականացվող «Հասարակական, հայագիտական և հումանիտար ոլորտներում հետազոտությունների մրցույթի» շահառուներ: Թեմայի արտասահմանյան խորհրդատուն Թեհրանի համալսարանի Եվրասիական հետազոտությունների կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Էլահե Քուլային է:

«Ի սկզբանե Վերոնիկայի հետ նախատեսել էինք ներկայացնել թեմա, որը կներառի երկուսիս մասնագիտական հետաքրքրությունների շրջանակը և կառնչվի տարածաշրջանի, Հայաստանի համար անվտանգային կարևորություն ունեցող հարցերին: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Իրան-Թուրքիա հարաբերությունների զարգացումները և հակասական շահերը, վերլուծել Իրան-Թուրքիա մրցակցային քաղաքականության դրսևորումները Հարավային Կովկասում, հետազոտել տարածաշրջանից դուրս այս երկու երկրների մրցակցային հարաբերությունների ազդեցությունը Հարավային Կովկասի վրա, գնահատել Իրանի վերջին նախագահական ընտրությունների արդյունքների ազդեցությունը տարածաշրջանային զարգացումներում, գնահատել այդ մրցակցության և գործընթացների արդյունքում Հայաստանի համար հավանական ռիսկերն ու հնարավորությունները: Ակնկալվում է, որ աշխատանքի արդյունքներով կներկայացվեն հիմնավոր վերլուծություններ այն մասին, թե ինչպես են երկու ուժային կենտրոնները ձևավորում իրենց ռազմավարությունը Հարավային Կովկասում»,- ներկայացրեց Աշխեն Գևորգյանը: Նա նշեց, որ քննության են առնվելու Հայաստանի անվտանգությանն առնչվող մի շարք հարցեր, օրինակ, այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» գործարկման հարցը:

Աշխեն Գևորգյանը նաև Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Մասնագիտական վերապատրաստում 2024/2» մրցույթի շահառու է՝ «Իրանը ԲՐԻԿՍ-ում» փոխադարձ շահերից մինչև տարածաշրջանային նոր հեռանկարներ» թեմայով: Ծրագիրն իրականացվելու է Բրազիլիայի Ռիո դե Ժանեյրո քաղաքում գտնվող «BRICS Policy Center»-ում՝ պրոֆեսոր Անա Էլիսա Սաժիորո Գարսիայի մենթորությամբ: Թեմայի շրջանակում ուսումնասիրվելու են ԲՐԻԿՍ-ին Իրանի անդամակցության ներքին և արտաքին նախադրյալները, Հարավային Կովկասում ԲՐԻԿՍ-ի հավանական հետաքրքրությունները ու ակնկալիքները, ԲՐԻԿՍ-ին Հայաստանի անդամակցության հնարավորությունները և այդ գործընթացում Իրանի հնարավոր դերակատարումը:

«Ակնկալվում է, որ հետազոտության արդյունքները կօգնեն հասկանալ Իրանի և ԲՐԻԿՍ երկրների միջև համագործակցությունը խթանող գործոնները և Հարավային Կովկասում դրանց հետագա հնարավոր ազդեցությունները: Դրանք նաև կլրացնեն ԲՐԻԿՍ-ի մասին առկա հայաստանյան գիտահետազոտական կենտրոնների անհրաժեշտ աղբյուրները, կնպաստեն ակադեմիական համագործակցության աշխարհագրության մեծացմանը, հետազոտական նոր ուղղությունների զարգացմանը»,- ասաց Աշխեն Գևորգյանը:

Գիտության ոլորտում երիտասարդ հետազոտողը կարևորում է միջմշակութային հաղորդակցությունը, ժամանակի կառավարման հմտությունը, դժվարությունները հաղթահարելու կարողությունը:

Մոնիկա ԵՐԻՑՅԱՆ

Արժեքավոր բանահյուսական ժողովածու

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի մակնիշով վերջերս լույս է տեսել «Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը» ուշագրավ և ստվարածավալ (Ա 4 չափսի 640 էջ) ժողովածուն (կազմողներ՝ Մ. Խեմչյան (գիտական ղեկավար), Է. Խեմչյան, Լ. Ղռեջյան, Հ. Մատիկյան):

Շիրակի տարածաշրջանի հարուստ բանահյուսական մշակույթը ներկայացնող այս գրքին ընթերցող-հետազոտողները սպասել են տասնամյակներ շարունակ: Շիրակը, լինելով հայ բանահյուսական մշակույթը կրող ու ապրեցնող ազգագրական շրջան, մինչև այս ժողովածուի լույս աշխարհ գալը կարոտ էր իր ամբարներում պահվող բացառիկ արժեքների հանրայնացմանն ու հանրահռչակմանը: Այս ծավալուն գրքում ի մի են բերվել վերջին հարյուրամյակում Շիրակի տարբեր տարածաշրջաններից հավաքագրված և բանահյուսության գրեթե բոլոր ժանրերին պատկանող բացառիկ ու արժեքավոր նյութեր՝ օգտագործելով ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի արխիվներում պահվող անտիպ նյութերը, դաշտային բանահյուսական նյութերի արդի գրառումները:

Աշխատանքը պատրաստվել է ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6B027 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

Ժողովածուն կազմված է առաջաբանից (15 էջ), որտեղ տրվում է Շիրակ աշխարհի պատմության ու աշխարհագրության համառոտ ուրվագիծը: Ըստ փուլերի՝ ներկայացվում են Շիրակում 19-րդ դարի վերջից մինչև 21-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում իրականացված բանահավաքչության, ուսումնասիրության և հրատարակության գործընթացը ներկայացնող տեղեկություններ:

Ժողովածուն բաղկացած է երեք ընդարձակ բաժիններից՝ 1. Վիպական բանահյուսություն, 2. Քնարական բանահյուսություն, 3. Ասույթաբանություն:

«Վիպական բանահյուսություն» բաժնում զետեղված են հրաշապատում (31 միավոր), իրապատում (60 միավոր) և կենդանապատում (4 միավոր) հեքիաթներ, որոնք կլրացնեն հայ ժողովրդական հեքիաթների մինչև այժմ հրատարակված հարուստ ժառանգության շարքերը: Բաժնում ընդգրկված են նաև առակներ, «Դարիբի հեքիաթը» սիրավեպի մի տարբերակ, ավանդություններ ու ավանդազրույցներ, իրապատում զրույցներ, զվարճախոսություններ, ստապատումներ և այլն:

«Քնարական բանահյուսություն» բաժնում ընդգրկված են Շիրակի երգերը, որոնց մեծ մասը կենցաղավարում են առ այսօր. այն Շիրակի երգերի հարուստ շտեմարան է:

«Ասույթաբանություն» բաժնում առկա են խոսքաշեն շիրակցիների արխաիկ մտածելակերպն արտահայտող բանաձևային բանահյուսության տարբեր ժանրերը ներկայացնող բացառիկ նյութեր:

Կազմողները հավատարիմ են մնացել նման ժողովածուների պատրաստման ակադեմիական չափանիշներին: Ժողովածուն հագեցած է հանգամանալից ծանոթագրություններով, Շիրակի բարբառի հարուստ բառարանով (շուրջ 2500 բառ), անձնանունների, տեղանունների և օգտագործված գրականության ցանկերով:

«Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը» ժողովածուն կազմված է գիտական հրատարակություններում մինչև այժմ կիրառված տեքստաբանական կանոններով՝ հավատարիմ մնալով բնագրին ու բարբառին:

Ընթերցողի սեղանին դրված այս ժողովածուն նոր ու կարևոր խոսք է հայ բանագիտությամբ, ազգագրությամբ և ընդհանրապես հայագիտությամբ հետաքրքրվողների համար:

Հասմիկ ԳԱԼՍՏՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՄՏ-ՔԵՐԻ ՀԱՐԹԱԿ

Գիտակրթական ոլորտ. ազգային կարգացման հիմնաքար և համակարգային ճգնաժամ

Աշխարհի առաջատար երկրներում կրթությունն ու գիտությունը հասարակական զարգացման հիմքն են՝ խթանելով նորարարություն, տնտեսական աճ և ժողովրդավարական արժեքներ: Սակայն Հայաստանում այս ոլորտները տասնամյակներ շարունակ համակարգային ճգնաժամի մեջ են, իսկ 2018 թ. քաղաքական փոփոխություններից հետո առկա մարտահրավերներն ավելի խորացան: Փորձենք հասկանալ, թե համակարգային առումով ինչպիսին է Հայաստանում կրթության և գիտության վիճակը, վարվող քաղաքականության հետ դրա փոխկապակցվածությունը և միջազգային փորձի հիման վրա ինչ լուծումներ կարելի է առաջարկել:

2018թ.-ից հետո երկրի կրթության և գիտության բնագավառում նախաձեռնված բարեփոխումները հակասական արդյունքների են հանգեցրել: Նախ, նկատվել է ուսանողների և գիտնականների թվի նվազում: Բարձրագույն կրթություն ստացող ուսանողների թիվը վերջին տասը տարում կրճատվել է շուրջ 21%-ով, բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի և գիտնականների թիվը՝ ավելի քան 25%-ով: Բարձրագույն կրթության համակարգում բնակչության ընդգրկվածության մակարդակով Հայաստանը (60%) շարունակում է զգալիորեն զիջել այնպիսի երկրների, ինչպիսիք են Լատվիան (93%), Ռուսաստանը (83%), Վրաստանը (79%), Բուլղարիան (74%), Էստոնիան (73%), Լիտվան (72%), Լեհաստանը (71%) և այլն: Սա պայմանավորված է ոչ միայն ժողովրդագրական խնդիրներով, այլև համակարգի ֆինանսավորման անբավարար մակարդակով, ինչպես նաև ոլորտի աշխատավարձերի ցածր ցուցանիշներով: Բազմաթիվ երիտասարդ գիտնականներ և ուսանողներ նախընտրում են կրթությունն ու աշխատանքը շարունակել արտասահմանում, ինչը նպաստում է մտավոր ներուժի արտահոսքին: Բուհերում ակադեմիական ազատությունները հաճախ սահմանափակվում են քաղաքական կամ տնտեսական ճնշումներով: Միաժամանակ բազմաթիվ փորձագետներ նշում են, որ կրթական ծրագրերը հնացած են և չեն համապատասխանում շուկայի պահանջներին: Չնայած կառավարությունը հաճախ ընդգծում է կրթության և գիտության կարևորությունը, այդ ոլորտի մասնագետները գործնականում հազվադեպ են ներգրավվում քաղաքական որոշումների կայացման գործընթացում: Առաջարկվող օրինագծերը, որոշումների նախագծերը հաճախ քննարկվում են առանց վերոհիշյալ համայնքի ներկայացուցիչների հետ լայն խորհրդատվության: Այս պայմաններում գիտությունը Հայաստանում դառնում է ոչ թե զարգացման շարժիչ ուժ, այլ «մաքուր տեսություն», իսկ կրթությունը՝ ձևականություն:

Այսպես, 2024 թ.-ին կառավարությունը բարձրագույն կրթության ոլորտին հատկացրել է 13,5 մլրդ դրամ, ինչը 14,6%-ով ավելի է, քան 2023-ին: Այնուամենայնիվ, չնայած բացարձակ արտահայտությամբ ոլորտին հատկացվող միջոցներն ավելացել են, սակայն թե՛ պետական բյուջեի ընդհանուր ծախսերում և թե՛ երկրի ՀՆԱ-ի նկատմամբ դրանք նվազել են: Գիտական և գիտատեխնիկական ոլորտին ուղղվող ծախսերը ևս վերջին տարիներին ավելացել են, սակայն մտահոգիչ է այդ ծախսերի կատարողականը: Այսպես, 2023 թ.-ին կառավարությունը գիտության ոլորտին հատկացրել է շուրջ 30 մլրդ դրամ, սակայն փաստացի ծախսվել է մոտ 23 մլրդ դրամ: Զուգահեռաբար վերջին տարիներին Հայաստանում գիտության ոլորտի աշխատողների թիվը շարունակում է նվազել: 2022 թվականին գիտության ոլորտում ներգրավված է եղել 4864 հոգի, ինչը շուրջ 26%-ով կամ մոտ 1700-ով պակաս է 2010 թվականի համեմատ:

Հայաստանում այսօր գործում է 60 համալսարան, որոնցից 2024 թ. աշխարհի համալսարանների վարկանիշային Շանհայի աղյուսակում ոչ մեկն ընդգրկված չէ, իսկ QS աղյուսակում ընդգրկված է միայն մեկը: Միաժամանակ վերջինում առկա են Ղազախստանի 64 համալսարաններից 21-ը, Հունգարիայի 62 համալսարաններից՝ 11-ը, Բելառուսի և Ադրբեջանի 50-ական համալսարաններից՝ 3-ական, Լատվիայի 28 համալսարաններից՝ 3-ը, Էստոնիայի 18 համալսարաններից՝ 3-ը, իսկ Լիտվայի 17 համալսարաններից՝ 5-ը: Եվ սա այն դեպքում, երբ 2023-ին օրենք դարձած Կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրով նախատեսված է, որ առնվազն 4 համալսարան կընդգրկվի այս աղյուսակների առաջին 500-ի մեջ:

Իսկ ի՞նչ սերունդ է գալիս ուսանող դառնալու, որպեսզի հետո էլ փոխարինի այսօրվա դասախոսներին ու գիտնականներին:

Ժողովրդագրության առումով երկրում վիճակն ուղղակի օրհասական է: Այսպես, UNICEF-ի հետազոտությունները հիմք են տվել կանխատեսելու, որ 2030 թվականին նորածինների թվաքանակը 2020 թվականի համեմատ կնվազի 14,7%-ով, իսկ նախադպրոցական (3-5 տարեկան) բնակչության թվաքանակը՝ 15,8%-ով: Միևնույն ժամանակ դպրոցահասակ բնակչությունը Երևանում կաճի 11,2 %-ով, իսկ մարզերի գյուղական ու քաղաքային բնակավայրերում կնվազի համապատասխանաբար 13,2%-ով և 16,8%-ով: Կրթության մասնաբաժինը համախմբված բյուջեի ընդհանուր ծախսերում 2018 թվականի 10.1%-ի համեմատ նախորդ տարի նվազել է մինչև 9%, քանի որ հանրային կրթական ծախսերի հավելաճն ավելի դանդաղ է եղել, քան ընդհանուր ծախսերի հավելաճը: Հանրային կրթական ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում 2010 թվականի 3.3%-ի համեմատ նվազել է ավելի քան 0,5%-ով: Այս ցուցանիշով Հայաստանն էականորեն զիջում է համադրելի երկրներին. անցած տարի Վրաստանում այն եղել է 3.8%, Մերձբալթյան երկրներում՝ 4.5%, Մոլդովայում՝ 6.1%: Ընդ որում ՀՀ կրթության ոլորտում պետական բյուջեի կատարողականը վերջին տարիներին միջինում չի գերազանցել 90%-ը:

Շատ է խոսվում կրթության ոլորտի հիմնական դերակատարների՝ ուսուցիչների աշխատավարձերի մասին: Այսպես, ՀՀ-ում ուսուցիչների միջին տարեկան վարձատրությունը կազմում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 58%-ը, Լատվիայում՝ 168%-ը, Սլովենիայում՝ 182%-ը, Լեհաստանում՝ 197%-ը, իսկ Թուրքիայում՝ 361%-ը:

Հանրակրթությունում դպրոցահասակ տարիքի երեխաների ընդգրկվածությունն ամենացածրն է 90-ականներից ի վեր: Այսպես, յուրաքանչյուր 10 երեխայից մեկն ընդգրկված չէ տարրական կամ միջին դպրոցում: Մասնավորապես հանրակրթությունում ներգրավված չեն 6 տարեկանների 15.9%-ը, 9 տարեկանների (4-րդ դասարան)՝ 9.9%-ը, 14 տարեկանների (9-րդ դասարան)՝ 13.2%-ը: Ե՛վ Համաշխարհային բանկի, և՛ ՀՀ կրթության տեսչական մարմնի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 10 տարեկան դպրոցականների շրջանում ֆունկցիոնալ անգրագիտության մակարդակը բարձր է 33%-ից, մինչդեռ նույն թիվը հետխորհրդային տարածքում միջինը 7-8%-ի սահմաններում է: Մեծ հաշվով երկրում չի օգտագործվում ամենաակտիվ խավի՝ երիտասարդության պոտենցիալը: Այսպես, 15-29 տարեկանների շուրջ 1/3-ը ո՛չ աշխատում է, ո՛չ սովորում:

Այս մտահոգիչ խորապատկերի կողքին աշխարհում կան օրինակներ, որտեղ կրթությունն ու գիտությունը զարգանում են և միաժամանակ ուղղակիորեն ազդում քաղաքականության վրա: Իռլանդիայի Սենատում (Խորհրդարանի վերին պալատ) 60 տեղերից 6-ը զբաղեցնում են Դուբլինի և Իռլանդիայի ազգային համալսարանների կողմից ընտրված ներկայացուցիչները: Նրանք ոչ միայն մասնակցում են օրենսդրական բոլոր քննարկումներին, այլև էական ազդեցություն ունենում ստորին պալատի կայացրած որոշումների հաստատման գործում: Սա հնարավորություն է տալիս ակադեմիական շրջանակներին անմիջականորեն ներգրավվելու քաղաքականության մշակման գործընթացում՝ ապահովելով կրթության և գիտության ոլորտի շահերի ներկայացվածությունը: Նման համակարգեր գործում են նաև Գերմանիայում, Ֆինլանդիայում, այլ երկրներում, որտեղ համալսարաններն ու գիտական կենտրոնները կառավարության համար հանդես են գալիս խորհրդատուի դերում, ապահովում են կայուն համագործակցություն գիտակրթական ոլորտի և պետության միջև: Հայաստանում, սահմանադրական փոփոխություններին վերաբերող քննարկումների ծիրում, կարծում եմ, հարկավոր է անդրադառնալ Գիտությունների ազգային ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի դերի կարևորությանը և Սահմանադրության մակարդակում դրա ամրագրմանը:

Կրթությունն ու գիտությունը կարող են դառնալ Հայաստանի զարգացման հիմնաքարը միայն այն դեպքում, երբ դրանք դադարեն լինել քաղաքականության համար «երկրորդական» թեմա: Հայաստանի նոր իշխանությունները (ներկա որոշում կայացնողների հետ հույսեր կապելն անիմաստ է) պիտի կարողանան կրթությունը և գիտությունը փոխակերպել այնպես, որ ոլորտը չդիտարկվի միայն որպես սոցիալական, այլ վերածվի ազգային անվտանգության գործոնի:

Ատոմ ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ դեկան

Ռուբեն Մալայան. Եթե այսպես շարունակվի, բոլորս ենք խորտակվելու...

Հայ-ամերիկյան համալսարանի դասախոս, նկարիչ-գեղագիր Ռուբեն Մալայանն անհնար է համարում, որ Իսրայելում որևէ մեկը Ցեղասպանության վերաբերյալ այնպիսի հայտարարություն անի, ինչպիսին Նիկոլ Փաշինյանի և նրա թիմի հայտարարություններն են Հայոց ցեղասպանության վերաբերյալ:

«Սա քաոս ստեղծելու համար է արվում: Ես 25 տարի առաջ Ամստերդամում Ցեղասպանության պաստառների պրոյեկտն էի անում, ինչը նպաստել է նաև Հոլանդիայի պառլամենտի կողմից Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձև ընդունելուն: Առանց անցյալին բաց աչքերով նայելու՝ դու ապագա չես ունենա: Սա այն հարցը չէ, որ պետք է քննարկվի»,- 168TV-ի «Ռեվյու» հաղորդման ընթացքում ասաց նա՝ ընդգծելով՝ դա թշնամու օրակարգն է՝ կասկածի տակ դնել այն կարևոր հարցերը, որոնք քննարկման ենթակա չեն:

«Հայոց ցեղասպանության հարցը բոլորը լավ գիտեն: Մեր ճանապարհն ու նպատակը մենք վաղուց որոշել ենք և գիտենք: Այս կարգավիճակը հավերժ չի լինելու: Կարևորն այն է, թե որոնք են քո կարմիր գծերը. մեր կարմիր գծերը չկան, ինչը նշանակում է, որ դու ոչ թե կոմպրոմիսի ես գնում, այլ ուղղակի ձեռքերդ բարձրացնում ես և ասում՝ կանեմ այն, ինչ թելադրում ես»,- նկատեց նա:

Ռուբեն Մալայանի դիտարկմամբ, եթե գործող իշխանությունների այս զիջողական քաղաքականությունը շարունակվի, ապա վերջում մնալու է Երևանի Հանրապետություն. «Այն, ինչ կատարվում է հիմա, միջանցքի մասին խոսակցությունները փազլի մի կտորն է, որը որպես շանտաժ օգտագործում են մեր դեմ: Ես չեմ կարծում, որ Նիկոլ Փաշինյանը հոգեպես առողջ մարդ է՝ դատելով իր տեսքից, պահվածքից, հայտարարություններից, մարմնի լեզվից: Դա օղակածև տարածվում է նրա թիմում բոլորի վրա: Դու չես կարող ունենալ հիվանդ կայսր ու առողջ սենատ, այդպես չի լինում...

Բոլոր ազգերն ունեն թույլ և ուժեղ կողմեր: Ոչ մի համակարգ Հայաստանում չի աշխատի, եթե չլինի նույն քաշի հակակշիռ, որն անընդհատ զսպի իշխանությանը: Եթե այդ հակակշիռը չկա, իշխանությունը միշտ գնալու է հեշտ ճանապարհով, որը չի բխում ազգի և պետության շահերից: Մեր թույլ կողմը միշտ եղել է այն, որ կարևոր հարցերի շուրջ կոմպրոմիսների գնալը միշտ տարբերակ է եղել. մենք հարմարվող ազգ ենք: ➢6

Եթե այսպես շարունակվի, բոլորս ենք խորտակվելու...

➢5 Բայց կա մի կարմիր գիծ, որից այն կողմ չպետք է թույլ տալ գնալ: Մենք հիմա շատ վտանգավոր կետում ենք գտնվում... Եթե պատկերացնում ես՝ ուր ես ուզում գնալ, նայում ես անցյալին, ասում՝ այստեղ սխալվեցինք, փորձենք նույն սխալը չկրկնել: Սրանք էլեմենտար բաներ են, և ծիծաղելի է նույնիսկ դրանց մասին խոսելը, բայց եթե քո էլիտան զբաղված է ուղղակի թատրոնով, պարզ է, որ իր ֆունկցիան չի կարող կատարել»,- ընդգծեց նա:

Ռուբեն Մալայանի գնահատմամբ մառախուղի մեջ ենք, որը պարզեցնելու փորձեր էլ չեն արվում. «Այդ մառախուղը հենց իշխանությունից եկող հռետորիկան է, կեղծ օրակարգերն են: Մարդիկ արդեն չգիտեն ում հավատալ»:

Մտավորականների լռության հիմնական պատճառը, ըստ գեղագրի, այն է, որ խոսքը տեղ չի հասնում. «Եթե Սոս Սարգսյանը, Խորեն Աբրահամյանն այսօր ողջ լինեին, որոնք մեզ համար միշտ նշաձող են եղել, գուցե մեր վիճակը մի քիչ այլ լիներ: Կան մարդիկ, որոնց կարծիքին դու հավատում ես, որովհետև նրա անցած ճանապարհը ցույց է տալիս, որ այդ մարդը չի գնացել կոմպրոմիսների, չի ստել, միշտ անկեղծ է եղել: Մեր հեղինակությունները հիմա դարձել են շոու-բիզնեսի մակարդակի հեղինակություններ, ինտելեկտուալ շերտ չի էլ երևում, ունի զրո ազդեցություն իրավիճակի վրա... Ես ոչ մի լավ բան չեմ տեսնում այս իշխանության մեջ, նրանց արդարացում չկա: Ես մի շատ լավ ծրագիր եմ մշակել, որը դադարեցվել է, որովհետև իշխանությունը որոշել է ստեղծել ակադեմիական քաղաք, և Ամերիկյան համալսարանը չի կարող նոր շենքեր կառուցել: Դրա պատճառով կանգնել է մի ամբողջ ծրագիր, որը կամաց-կամաց կարող էր իրականություն դառնալ և ավելացնել վիզուալ կրթությանը պակասող մի կարևոր մաս: Այդ ակադեմիական քաղաքից շատ դիվիդենտներ կարող են իրենք շահել՝ ոչ միայն կենտրոնում գտնվող շենքերի առումով, այլև երիտասարդներին ուղղակի հեռացնել քաղաքից, որ խոսելու հնարավորություն չունենան, կամ նրանց կարծիքը լինի այնտեղ, ոչ թե այստեղ... Այսօր ուսանողությունն իրենից ոչ մի ուժ չի ներկայացնում, ու էլի ֆրագմենտացված վիճակ է հասարակության մեջ, ինչն ամենաաղետալի բանն է, երբ չես կարողանում կոնսենսուսի գալ էլեմենտար հարցերի շուրջ: Ամեն ինչ ֆրագմենտացված է, բոլորը բոլորին դեմ են, ոչ ոք պատրաստ չէ ոչ ոքի լսել, դրանից շահում է միայն իշխանությունը, որովհետև այդ քաոսի մեջ կարող է անել ինչ ուզում է, և ոչ մի զսպող մեխանիզմ չկա»:

Հետաքրքրվեցինք՝ Արարատը Ռուբեն Մալայանի համար ինչ սիմվոլիկա ունի: «Արարատն ինձ տեղափոխում է ուրիշ հարթության մեջ: Եթե ես մարդու ձեռքով կառուցված ոչինչ չեմ տեսնում, միայն լեռն է երևում, ինձ համար այն ժամանակի մեքենա է, ինձ տանում է ուրիշ հարթության մեջ, և սկսում եմ երազել: Երևի այդ գեղեցկությունն ու եզակիությունն է, որը ուրիշ ոչ մի տեղ չկա: Արարատն ինձ համար հավաքական հայրենիք է... Ու դա զարմանալի չէ, որովհետև միշտ է այդպես եղել մեզ համար, Արարատյան թագավորությունից սկսած: Այն երազ է: Ես հուսով եմ՝ մի օր մեզ համար հասանելի կլինի»,- ի պատասխան՝ ասաց նա՝ աբսուրդ որակելով Արարատի դեմ գործող իշխանությունների քարոզչությունը:

Գեղագրի խոսքով ազգերի համար սիմվոլները շատ կարևոր դեր ունեն. «Սիմվոլները հավաքական կերպարի արտահայտում են, դրանք քո ազգի տաղանդավոր ներկայացուցիչներն են ստեղծել: Խնդիրը մեր դեպքում այն է, որ վերջին 30 տարվա մեջ չենք կարողացել ստեղծել որևէ նոր բան, որը կողմնացույցի դեր կխաղար մեզ համար, որ բոլորս կասկածի դեպքում հայացքներս այդ ուղղությամբ նետենք ու հիշենք, որ մենք այստեղից ենք եկել»:

Դիտարկմանը՝ Արցախը չէ՞ր այդ սիմվոլը, նա արձագանքեց. «Այո՛, նաև Արցախն էր, ու երևի Արցախի կորուստն է, որ հոգեբանական ծանր վիճակի մեջ է դրել այն մարդկանց, ում համար Արցախն իրենց հայրենիքն էր, իսկ ես այդ մարդկանցից եմ: Իշխանություններն ինչքան ուզում են, թող ասեն, որ նախկինում Արցախն իրենց հայրենիքը համարելով՝ սխալվել են, պատմությունն իրենց կդատի: Ո՛չ ՔՊ-ն է անվերջ ու ընդմիշտ, ո՛չ էլ Նիկոլ Փաշինյանը, կգա մի օր, ու ամեն ինչ իր տեղը կընկնի: Պատմությունն իրենց կդատի, և շատ լավ գիտենք՝ որտեղ է իրենց տեղը լինելու պատմության էջերի մեջ: Նման ճգնաժամ ոչ ոք երբեք չի կարողացել ստեղծել մեզ համար, սա մեր եփած ճաշն է, որովհետև իրենք էլ են մեր ազգի ներկայացուցիչներ, չնայած ես չէի զարմանա, եթե ԴՆԹ թեստ անեին, ու պարզվեր, որ հայի գեն նրանց մոտ շատ քիչ կա: Բայց դարձյալ ժամանակն ամեն ինչ իր տեղը կդնի»:

Նա շեշտեց՝ բոլորս նույն նավակի մեջ ենք, ու ճակատագիրը բոլորինս է լինելու. «Սա շղթա է, մենք բոլորս շղթա ենք, իսկ շղթան երբ գցում ես ջրի մեջ, ամբողջովին է սուզվում, չկա մի մաս, որը մնում է ջրի մակերեսին: Մենք այդ շղթան ենք, ու այդ գիտակցումը պետք է ինչ-որ մի պահից զարթնի, որ բոլորս նույն նավակի մեջ ենք, ու բոլորս պետք է մտածենք ու մտահոգվենք, թե այդ նավակն ինչքան արագ է ջրով լցվում, և դու գիտես՝ այն խորտակվելու է: Մենք հասկացել ենք՝ որտեղից է ջրի ներհոսքը, բայց չգիտենք ինչ անել: Ես շատ կուզեի, որ խելացի մարդիկ հիմա լուրջ մտածեին տարբեր քաղաքական լուծումների մասին: Ես քաղաքագետ չեմ, ես մտածող մարդ եմ ու տեսնում եմ, որ եթե մի բան չի աշխատում, փորձել նորից նույն մեթոդը կիրառել, բերելու է նույն իրավիճակին...»:

(168.am, 8 փետրվարի, 2025):

Աշխարհասփյուռ հայ երաժիշտները. Կարո Ավեսյան

1975 թվականին Հայաստանից Լիբանան տեղափոխված քանդակագործ Վարդան Ավեսյանի արվեստասեր հարկի տակ 1979 թվականի ապրիլի 28-ին լույս աշխարհ եկավ նրա որդին՝ Կարոն (Կարապետը):

1998 թ. Կարո Ավեսյանն ավարտել է Բեյրութի Հայ ավետարանական քոլեջը: Նախնական երաժշտական կրթությունը ստացել է Թեքելյան երաժշտական դպրոցում, ինչպես նաև հետևել կոմպոզիցիայի, գործիքավորման և հարմոնիայի դասընթացներին Վաչե Կալենդերյանի մոտ:

Բարձրագույն երաժշտական կրթություն ստանալու փափագը Կ. Ավեսյանին 2001-ին առաջնորդում է Հայրենիք: 2006-ին նա գերազանցությամբ ավարտում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական, իսկ 2007-ին՝ դիրիժորական բաժինները:

Ավարտելով իր ուսումնառությունը Երևանում՝ Կ. Ավեսյանը 2007-ին վերադառնում է Լիբանան և նշանակվում Համազգայինի Բարսեղ Կանաչյան երաժշտական քոլեջի տեսության բաժնի ղեկավար, իսկ 2009-ին ստեղծում է քոլեջի կամերային նվագախումբը:

Լիբանանում Ավեսյանի գործունեությունը ծավալվում է մի քանի շատ կարևոր և իրար լրացնող ուղղություններով՝ մանկավարժական, կատարողական (դիրիժորական և խմբավարական) և ստեղծագործական:

2008-ին Կ. Ավեսյանը նշանակվում է Լիբանանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի դիրիժոր և պետական կոնսերվատորիայի դասախոս:

Բեյրութում Ավեսյան դիրիժորի դեբյուտը տեղի ունեցավ 2008 թ. հոկտեմբերին: «Աւեսեան հմայեց երաժշտասէր բազմութիւնը իր համաչափ ձեռքի ղեկավարութեամբ եւ խոր զգացումներով վերակենդանացուց մեծն երաժիշտներուն գործերը եւ սքանչելիօրէն ծանօթացուց հանրութեան, որոնք ծափողջիւններով ընդունեցան 29-ամեայ խմբավարը՝ մաղթելով երաժշտական նորանոր նուաճումներ եւ բարձր վերելք»,- գրում էր Գլենդելում լույս տեսնող «Նոր Հայաստան» օրաթերթը:

2007-2011 թթ. Կ. Ավեսյանը պաշտոնավարել է Մերձավոր Արևելքի աստվածաբանական ճեմարանում՝ որպես երգչախմբի ղեկավար և «Երաժշտական հիմունքներ» առարկայի դասախոս: 2010-ից առ այսօր Բեյրութի արաբական համալսարանում դասախոսում է «Երաժշտական հիմունքներ» առարկան:

Ներկայումս Կ. Ավեսյանը շարունակում է ղեկավարել Լիբանանի ֆիլհարմոնիկ նվագախումբը և ակտիվորեն մասնակցել Լիբանանի երաժշտական կյանքին:

Բնականաբար, որպես Լիբանանի օրինակելի քաղաքացի՝ Կ. Ավեսյանն իր ներդրումն ունի նաև լիբանանյան երաժշտության մեջ. նա կատարել է լիբանանյան ժողովրդական երգերի մշակումներ էստրադային նվագախմբի համար:

Եվ տրամաբանական է, որ իր 2-րդ հայրենիքը դարձած Լիբանանը գնահատել է երիտասարդ երաժշտի կատարած աշխատանքը: Սբ. Միշել ինստիտուտի երիտասարդական կամերային նվագախմբի հետ աուտիզմով հիվանդների բուժմանն աջակցելու համերգի համար 2015 թ. ապրիլին պարգևատրվել է Լիբանանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հատուկ մրցանակով:

Կ. Ավեսյանը հյուրախաղերով հանդես է եկել աշխարհի տարբեր երկրներում: Նշենք դրանցից մի քանիսը: 2022 թ. հուլիսին Ռումինիայում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կազմակերպած Classics For Pleasure փառատոնի եզրափակիչ համերգին ղեկավարել է Սիբյու և Պլոյեշտ քաղաքների ֆիլհարմոնիկ նվագախմբերը:

2024 թ. փետրվարին Հունգարիայում տեղի ունեցան Կարո Ավեսյանի հյուրախաղերը. նա ղեկավարեց Duna Szimfonikus Zenekar Դանուբի սիմֆոնիկ նվագախումբը: Համերգները կայացան Բուդապեշտ և Կոբան քաղաքներում:

Կարո Ավեսյանը բազմաժանր կոմպոզիտոր է. ստեղծագործել է սիմֆոնիկ, կամերային, խմբերգային ժանրերում: Նշենք նրա լավագույն ստեղծագործություններից մի քանիսը՝ Սոնատինա կլառնետի և դաշնամուրի համար, «Ցոլուն աստղեր» (երգչախմբի համար, Հովի. Թումանյանի տեքստով, Թեմա և վարիացիաներ դաշնամուրի համար, Դաշնամուրային կվարտետ, Վոկալ շար՝ «Երեք Հայրեն Քուչակէն» մեցցո-սոպրանոյի և դաշնամուրի համար, Սոնատ ջութակի և դաշնամուրի համար և այլն:

Կ. Ավեսյանի ստեղծագործական նվաճումներից է այն, որ DAVINCI Publishing միջազգային հրատարակչատունը հրատարակել է նրա չորս ստեղծագործությունների նոտաները:

Վերջին շրջանում դիրիժոր, կոմպոզիտոր և մանկավարժ Կարո Ավեսյանը լրջորեն զբաղվում է նաև գիտահետազոտական աշխատանքով: Նա սովորել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտուրայում և ներկայումս գրում է իր թեկնածուական ատենախոսությունը լիբանանահայ կոմպոզիտոր Պողոս Ջելալյանի մասին: Նրա գիտական հոդվածները հրատարակվել են Հայաստանի և Լիբանանի հեղինակավոր գիտական պարբերականներում, իսկ 2023 թ. սեպտեմբերին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կազմակերպած «Արամ Խաչատրյան-120» միջազգային գիտական կոնֆերանսում նա հանդես եկավ «Արամ Խաչատրյանի ստեղծագործական գործունեության լիբանանյան էջը» արժեքավոր զեկուցումով՝ գիտական շրջանառության մեջ դնելով նորահայտ նյութեր ու տվյալներ Արամ Խաչատրյանի մասին:

Բնականաբար հետաքրքիր է, թե ինչ տեղ է գրավում Հայաստանը Կ. Ավեսյանի ճակատագրում: «Հայրենիքում սովորելով և ապրելով 2001-2007 թթ.՝ մասնագիտական կայուն քայլեր ձեռք բերեցի, որոնք նաև օգնեցին հետագայում բարձր նվաճումներ ունենալ եվրոպական բեմերում, ինչպես նաև մրցույթներում և վարպետաց դասընթացներում: 2018 թ. Հունգարիայում՝ Դանուբի 14-րդ միջազգային դիրիժորական մրցույթում, ստացա Գրան Պրի և առաջին մրցանակ: Հաջորդ տարի՝ 2019 թ.՝ որպես մրցանակակիր, հատուկ համերգով դարձյալ հրավիրեցին Բուդապեշտ՝ որպես հյուր-դիրիժոր:

Իսկ երբ վերադարձա Լիբանան, նշանակվեցի Լիբանանի ֆիլհարմոնիկ նվագախմբի դիրիժոր և պաշտոնավարում եմ մինչև այսօր:

Սփյուռքում ապրելն առանց հայրենիքի հետ կապ ունենալու մնում է լոկ անավարտ շարունակություն»,- նշում է անվանի արվեստագետը:

Կ. Ավեսյանի կապը հայրենիքի հետ շատ ամուր է: Նա հյուրախաղերով հաճախ է հանդես գալիս Հայաստանում: Վերջին համերգը կայացավ 2022 թ. հունիսին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տան դահլիճում: Հայաստանի պետական կամերային նվագախմբի հետ մեծ հաջողությամբ նա կատարեց Էդվարդ Միրզոյանի Սիմֆոնիան լարայինների ու հարվածայինների համար:

Երևանյան ունկնդիրը միշտ սիրով ու նորանոր հայտնությունների ակնկալիքով է սպասում իր տաղանդավոր հայրենակցի՝ Կարապետ Ավեսյանի երևանյան ելույթներին:

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Դառնացած ժողովուրդ

Մտածմունքներ կան, որ սաստիկ ծանր են, բայց դուք դատապարտված եք մտածելու, չեք կարող փախչել նրանցից: Նրանք էն ծանր հիվանդությունների նման են, երբ դուք գիտեք, որ ձեր մարմնի մեջ կրում եք քաղցկեղի խոցը, բարակացավի բացիլները կամ ժանտախտի թույնը: Չեք կարող անց կենալ ու արհամարհել, կամ նրանք պետք է ձեզ հաղթահարեն ու սպանեն, կամ դուք պետք է մարդկային հանճարի տված ամեն միջոցներով վեր կենաք ցավերի դեմ ու ազատվիք, առողջանաք. իհարկե, եթե էնքան արիություն ու հասկացողություն ունիք:

Էն մարդիկ, որ երկար ու լուրջ զբաղվել են մեր ժողովրդով, մեր մարդով, միշտ եկել են մի ծանր եզրակացության, թե շատ չարություն կա մեր հոգում:

Էսպես են ասում նրանք և ասում են խորը ցավով, ինչ ցավով որ կարելի էր ասել, թե բարակացավի բացիլներ կան իմ կրծքում:

Բայց քիչ են էս տեսակ ազնիվ ու քաջ մարդիկը: Մեծ մասամբ ախտի գոյությունը ընդունելով հանդերձ, իրենց առողջ են համարում ու միշտ ուրիշներին են հռչակում հիվանդ: Ամեն մինը ինքը չար չի, կեղծավոր չի, հայհոյող չի, ստախոս չի, թայֆայական չի, էդ ամենը իրենից դուրս ուրիշներն են:

Բայց, իհարկե, սրանց չպետք է հավատալ, ոչ էլ ականջ դնել: Ճշմարիտը էն է, որ մեր ամբողջությունը տառապում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդությունով:

Նայեցե՛ք:

Գյուղացի ռանչպար մարդիկ են, հարևան, միասին մեծացած, իրար հետ օխտը բեռը աղ ու հաց կերած, բայց եթե մեկի արտը լավ է գալի կամ անասունը բազմանում, մյուսը նախանձից հիվանդանում կամ ինչպես իրենք են ասում՝ «արնով է ընկնում»:

Վաճառականներ են, առուտուր են անում, թեկուզ մրցակիցներ էլ չեն, բայց մեկը մյուսի հաջողությունը լսելիս քունը կորցնում է ու էնքան էլ իր գործի վրա չի մտածում, որքան նրա հաջողության վրա է դարդ անում ու տեղն ընկած տեղը ոչինչ չի խնայիլ նրա գործին վնասելու:

Հոգևորական է. ինչքան վարձ ու պատիվ կուզեք տվեք - միշտ դժգոհ է, բողոքում է, գանգատվում է անարդարությունից, և գիտե՞ք էդ անարդարությունը որն է, որ իր ընկերն էլ է նույնը ստանում կամ նա էլ է կարողանում ապրել:

Քաղաքացի թե գյուղացի, երկուսը վեճ ունեն իրար հետ: Ոչ մի դատաստանում չի վերջանում նրանց վեճը, տևում է երկար տարիներ, և հաճախ իրենց ամբողջ կյանքն ու կայքը դնում են էդ վեճի վրա, մինչև կարողանում է մեկը մյուսին խեղդել, գետնին հավասարել, կամ հենց երկուսն էլ փչանում են:

Մամուլ կա: Տասնյակ տարիներով ու անհամար դեպքերով փորձված է, է՛լ հայհոյանք, է՛լ զրպարտություն, է՛լ ափաշկարա սուտ, է՛լ չարախոսություն, կեղծավորություն: Նեղ թայֆայականությունը հո ոչ մի գյուղում գուցե էնքան անվայել կերպարանք չի առել, որքան սրա մեջ: Մի հայտնի հրապարակախոս պատմում էր, թե պարզ խոսում էին մեր խմբագրատանը, թե էս կամ էն գրողին, ինչքան էլ լավ գրվածք հրատարակի, միշտ պետք է զարկել, ծաղրել կամ լռել, մի խոսքով ամեն կերպ աշխատել սպանել, միայն նրա համար, որ մեզ հետ չի, մեր թայֆիցը չի:

Էդպես էլ մտեք ազգային, հասարակական, գրական գործիչների մեջ: Մեկը մյուսի հռչակն ու հաջողությունը տանել չի կարողանում:

Հիմի եկեք ուսուցիչներին տեսեք: Դասերից ավելի շատ է՛ն աշխատանքի վրա են, որ իրար ոտի տակ փորեն, և շարունակ մի որևէ չնչին դեպք, որ կարելի էր ընկերական շրջանում հեշտ վերջացնել, ազգային հարց դարձրած, տարիներով ճգնում են պաշտոնական ճանապարհով, դատարանով ու մամուլի էջերում մեկը մյուսին անվանարկել, հալածել ասպարեզից ու սպանել բարոյապես... ո՛չ մի մեղմություն, ո՛չ մի ներողամտություն, ո՛չ մի սահման չարությանը:

Ինչո՞ւ է էսպես:

Պարզ հասկանալու համար երևույթի վրա պետք է նայել բնության ու պատմության օրենքների բարձրությունից, էն լայն, խաղաղ ու խոր հայացքով, որ նրանք միայն կարող են տալ: Ուրիշ ընդհանուր հանգամանքների հետ զարհուրելի ծնող է եղել մեզ համար մեր պատմությունը: Նա երկար դարերով մեզ դրել է բարբարոս ժողովուրդների ոտների տակ: Իսկ ամեն կենդանի գոյություն, որ ոտնատակ է ընկնում, եթե չի մեռնում, այլանդակվում է, դառնանում ու փչանում: Էսպես է բնության օրենքը:

Էն հասարակ վարունգի թուփն ինչ է. հայտնի է, որ եթե նա էլ ոտի տակ է ընկնում, էլ նրա պտուղը չի ուտվում, էնքան է դառնանում: Նրա համար էլ ձեզ թույլ չեն տալ, որ նրա թուփը ոտի տակով անեք: Էնպես դառնանում ու դաժանանում է և՛ մարդը, նրա հոգին, սիրտը, միտքը, ու ներքին դառնությունը դուրս է տալի, հայտնվում է և՛ աչքերում, և՛ դեմքին, և՛ խոսքերում, և՛ գործերում, ամեն տեղ, ամեն ասպարեզում, ու ամբողջ կյանքը դարձնում է դառն ու դաժան: Եվ էս տեսակ կյանքը կունենա, այո՛, շատ բան, և՛ «հառաջադիմություն», և՛ «կուլտուրա», և՛ «մամուլ», և՛ «գրականություն», և՛ «դպրոց», և՛ «բարեգործություն», բայց էդ բոլորը ներսից ճիճվի կերած պտուղի նման են, և տառապում են հիմնական պակասություններով, մի ընդհանուր ցավով, որի ճարը դրսից անել չի կարելի: Էդ տեսակ կյանքը կտա և տաղանդավոր մարդիկ, սակայն նրանք էլ կլինեն դառն ու դաժան: Բայց նա չի կարող ծնել ազնիվ մարդիկ, բարի սրտեր ու բարձր ոգիներ, հենց է՛ն, ինչը որ դարձնում է մի կյանք՝ գեղեցիկ ու հրապուրիչ, և մի ժողովուրդ՝ թանկ ու համակրելի:

Արդ, եթե մենք ունենք ազգային իմաստություն, հոգու արիություն և առողջ բնազդներ, անկարելի է՝ աչքներս փակենք մեր էս ծանր հիվանդության առաջ և չզգանք, որ մեր հոգին շատ է դառնացած, մեր ներքին մարդը շատ է փչացած, և դրա դեմ կռվելու, առողջանալու առաջին պայմանը էն է, որ մենք և՛ մեր սրտերում, և՛ աշխարհքի առաջ անկեղծ խոստովանենք ու ճանաչենք մեր դժբախտությունը: Ապա թե էդ փրկարար գիտակցությանը կհետևեն ինքնակատարելագործության բարձր ցանկությունն ու ազնիվ գործը:

Ուրիշ ճանապարհ չկա. ներսից է լինելու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փչացած:

1910 թ.

Արգո խմբագրապետ պարոն Ինքնահավանունի

(Երգիծական պատում)

Հանրապետության պատվական թերթերից մեկի խմբագրապետն է պարոն Ինքնահավանունին՝ մեծ հրապարակագիր, լրագրող, հայագետ, լեզվաբան, գրականագետ, պատմաբան, հնագետ, աշխարհի տակ էլ բան չմնաց ....ագետ, դպրոցաշինարար, զորավար, կարճ ասած, մի բացառիկ գոյություն:

Ամեն առավոտ հաստ ոտքերով, հաստ մարմնով, պարանոցի հաստ տրամագծով, հաստ գլխով, որի մեջ գտնվող ուղեղի վրա եղած ծալքերի քանակն ու որակն առանձին խոսակցության նյութ են, մի քանի քառակուսի սանտիմետր տարածք զբաղեցնող բեղմորուքանման գոյացությամբ, համարյա միջին տարիքի (թեպետ ինքն իրեն քսան տարեկան է զգում) պարոն Ինքնահավանունին տեղից վեր կենալուն պես մոտենում է իր մեծադիր հայելուն և նայելով իրեն՝ մտքի մեջ ասում. «Ի՜նչ անզուգական, բայց, ավա՜ղ, չհասկացված ու չգնահատված հանճար եմ ես»: Շատ է ափսոսում, որ ստիպված պիտի լինի աշխատանքի և առօրյա այլ հոգսերի ու խնդիրների պատճառով հեռանալ հայելու մոտից և չկարողանալ թեկուզ մի քանի ակնթարթ ավելի հիանալ հայելու մեջ երևակվող իր հանճարի արտացոլանքով: Ինչևէ, մեծ ախորժակով վայելելով նախաճաշը՝ պարոն Ինքնահավանունին ուղղություն է վերցնում դեպի խմբագրություն՝ դեպի իր անզուգական հանճարի դրսևորման սրբազան վայրերից մեկը: Այստեղ աշխատակիցներին, եկող-գնացողներին օրվա մեջ մի քանի անգամ իր հանճարի մասին տեղեկացնելով և նրանց մոտ իր հանճարի գովքն անելով՝ արգո պարոնը նաև աշխատում է՝ նախապատրաստում և հմուտ մանկաբարձուհու նման ընդունում թերթի՝ անպատմելիորեն բովանդակալից ու հետաքրքիր հերթական համարի ծնունդը:

Մեծ խմբագրապետը նաև անսահման հայրենասեր է, առավոտից երեկո գրում է հայրենասիրական հոդվածներ, ակնարկներ, խոհագրություններ, հաճախ շեշտում, որ ինքը իսկական հայ է, իսկական հայրենասեր, իսկական ազգասեր՝ իր ողջ հոգով, մտքով, սրտով, լյարդով, լեղապարկով, երիկամներով, ընդգծում, որ ինքը հայ ազգի տերն ու ծառան է, հենասյունն ու գմբեթը, լոգինն ու պառոլը, պատմում ազգի համար իր արած անձնուրաց արարքների մասին՝ լռելը համարելով սոսկալի անարդարություն:

Աշխատանքային օրվա ավարտին իր հերթական փառակերտումներից հիացած պարոն Ինքնահավանունին բնականաբար տուն է գնում: Իհարկե, հիմնականում հանգստյան օրերին, նաև ծանոթներին, ազգականներին ու բարեկամներին է այցելում, նրանց ևս անպայման տեղեկացնում իր հանճարի ու հայրենասիրության մասին:

Երեկոներն անցկացնում է համարյա սովորական մահկանացուի նման. զույգ աչքերը կենտրոնացնում, երբեմն էլ չռում է հեռուստաէկրանին: Այդ ընթացքում տարբեր զգացումներ է ունենում մեծարգո մտավոր այրը, որոնցից հատկապես մեկն է վառ ու վառման դրսևորվում. «Անպետք, անդիտարժան, անհետաքրքիր, անիմաստ, անհամ, անհոտ և ան- նախածանցով կազմված բացասական երանգավորում ունեցող բազում այլ բառերով բնութագրվող հեռուստաեթեր, որտեղ չկամ ես, չկա իմ հանճարը. մեղք, հազա՛ր անգամ մեղք հեռուստաաշխարհին, նաև կարեկցանք ազգիս ու մարդկությանը, որ զուրկ են մնում իմ հանճարին հաղորդակից լինելուց»:

Պարոն Ինքնահավանունին, սակայն, շուտ չի պառկում քնելու, գիշերվա երանավետ անդորրի ու հանգստության մեջ ստեղծագործում է, երկնում հրապարակագրության չտեսնված ու չլսված գոհարներ, անում բառերի դարաբացիկ ստուգաբանություններ. երբ գրեթե ողջ



մարդկությունը քնած է, նրա հանճարը երկնում է անգին գանձեր, որոնց գոյությանը մարդկությունը, ափսո՜ս, մեծավ մասամբ անտեղյակ է, տեղեկանալու դեպքում էլ դրանց արժեքը ինչպես հարկն է չի գիտակցում: Բայց մեծահանճար պարոնը չի վհատվում, նա վստահ է, որ մի արևաշող օր, ամենայն հավանականությամբ գարնանային (նա դա շատ կուզենար), իր անզուգական հանճարը վերջապես կհառնի նախ՝ ծանոթ-բարեկամների, ընկերների, գործընկերների, պաշտոնակիցների, հետո՝ ազգի, իսկ վերջում՝ համայն մարդկության առջև: Այս փափագի իրականացումից հետո նա մի թաքուն երազանք էլ ունի՝ իր հանճարը ներկայացնել նաև այլ մոլորակներում, բայց դա արդեն այս երկրագնդցիների հետ հարցերը լուծելուց հետո:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ
(Հրաչյա Արմենյան)

Մեր երիտասարդ ստեղծագործողները. Արմինե Պետրոսյան

Արմինե Պետրոսյանը 2012 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան ԵՊՄՀ-ի գեղարվեստի ֆակուլտետի կերպարվեստի պատմության և տեսության բաժինը: 2012-2014 թթ. հաճախել է Արարատյան հայրապետական թեմում գործող սրբանկարչության և մանրանկարչության դասընթացների:

Ուսանելու տարիներին մասնակցել է մի շարք խմբակային ցուցահանդեսների:

2017 թ. Նարեկացի արվեստի միության ցուցասրահում կայացել է «Կյանքի գույները և հոգևորի լույսը» խորագրով նրա առաջին անհատական ցուցահանդեսը, իսկ 2023 թ. Հենրիկ Իգիթյան գեղագիտության ազգային կենտրոնում մասնակցել է «Նկարազարդ հասարակած. Հայաստան» ծրագրի շրջանակում կազմակերպված ցուցահանդեսին:

2014 թ. առ այսօր Արմինե Պետրոսյանն աշխատում է ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսում, իսկ 2021 թ. համատեղությամբ աշխատում է նաև ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտաշխատող և ուսումնասիրում է XIX դ. վերջի - XX դ. սկզբի մեծատաղանդ թիֆլիսահայ նկարիչ Հմայակ Հակոբյանի կյանքը և ստեղծագործությունը:

Վերջերս «Էդիթ-պրինտ» հրատարակչությունը լույս է ընծայել խոստումնալից նկարչուհու ստեղծագործությունների գունավոր վերատպությունների եռալեզու կատալոգը, որում տեղ են գտել 100-ից ավելի նատյուրմորտներ, բնապատկերներ, սրբապատկերներ, դեկորատիվ ափսեներ: Այս աշխատանքները փաստում են, որ Արմինեն հավասարապես տիրապետում է թե՛ յուղաներկով, թե՛ գուաշով և թե՛ տեմպերայով ստեղծագործելու նրբերանգներին:

Կատալոգի առաջաբանի հեղինակ արվեստաբան Վարդիթեր Գամաղելյանը նշում է. «Արմինե Պետրոսյանը արվեստի տեսաբան է: Արմինեի գիտելիքների և գեղարվեստական հմտությունների կուտակումն արդեն իսկ տվել է իր արդյունքները, որոնք ներկայացված են այս պատկերագրքում: Արմինե Պետրոսյանը երիտասարդ է, ավյունով լեցուն. այն լիովին արտահայտվում է իր բազմաշերտ արվեստում և, անկասկած, գործնական բնագավառից զատ, նկարչուհին կդրսևորի իր ուժերը տեսաբանության բնագավառում ևս»:

Իրեն այնքան հոգեհարազատ նկարչությունից բացի, Արմինե Պետրոսյանը

զբաղվում է նաև գիտական աշխատանքով: 10 գիտական հոդվածի հեղինակ է և շուտով ավարտին կհասցնի իր թեկնածուական ատենախոսությունը:

«Գիտություն» թերթի խմբագրություն

ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԳՈՐԾԱԾՎՈՂ ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՄՈՒՍԱ

Մուսա էին կոչվում հունական դիցաբանությունում ինը դիցուհիներ, որոնք համարվում էին Զևսի դուստրերը: Բնակատեղին համարվում էին Պառնաս, Պինդոս և Հելիկոն լեռները:

Քույրերից յուրաքանչյուրը հովանավորում էր արվեստի կամ գիտության մի ճյուղը: Այսպես, օրինակ, Կլեյոն՝ պատմության, Եվտերպեն՝ երաժշտության, Թելիան՝ կատակերգության, Մելպոմենը՝ ողբերգության, Տերպիսիխորեն՝ պարերի, Երաթոյը՝ եղերերգության, Պոլիգիմանը՝ քնարական բանաստեղծության, Ուրանիան՝ աստղաբաշխության, Կալլիոպեն՝ դյուցազներգության և ճարտարապետության:

Մուսա արտահայտությունը փոխաբերական իմաստով նշանակում է բանաստեղծելու ընդունակություն, ոգեշնչում:

ՄԵԿԵՆԱՍ

Երկու հազար տարի առաջ՝ Հռոմի Օգոստոս կայսեր ժամանակ, Հռոմում ապրում էր Մեկենաս ազգանունով մի մեծահարուստ մարդ, որը շատ նպաստեց հռոմեական գրականության ու արվեստի զարգացմանը: Մեկենասը համարվում է Օգոստոս կայսեր ամենամեծ խորհրդատուն և օգնականը: Մեկենասը շատ կենսուրախ և լավատես մարդ էր: Պատմում են, որ նա բազմիցս կարողացել է Օգոստոսին հետ կանգնեցնել այս կամ այն անարդար որոշումից ու դատավճիռներից: Ժամանակի ընթացքում Մեկենաս անունը բարի համբավի արժանացավ, հատկապես բանաստեղծներին և արվեստագետներին հովանավորելու համար: Մեկենաս անունն իրենց գործերում գովերգեցին մեծ բանաստեղծներ Վիրգիլիոսը, Հորացիոսը և ուրիշներ:

Մեկենաս բառը ժամանակի ընթացքում հասարակ անուն դարձավ: Ասվում է ընդհանրապես այն մարդու համար, որն առհասարակ հովանավորում է գիտությունը, արվեստը, նյութական օգնություն ցույց տալիս գիտնականներին, արվեստագետներին, խրախուսում և օժանդակում հրատարակելու նրանց գործերը:

ՎԱՆԴԱԼ

Այս անունով պատմության մեջ հայտնի է հին գերմանական ցեղերից մեկը, որը նվաճեց Հռոմեական կայսրության մի մասը և Հռոմը: Նրանք կողոպտեցին և քանդեցին Հռոմը, ոչնչացրին հոյակապ հուշարձանները: Շատ դարեր անցան, վանդալները հեռացան պատմության ասպարեզից, բայց տխուր անուն թողեցին սերունդներին:

Ներկայումս «վանդալ» արտահայտությունը գործածվում է բարբարոս, մշակութային արժեքներ ավերող, նվաճողի նկատմամբ:

ՏՐԻԲՈՒՆ

Հռոմեացի բարձրաստիճան պաշտոնյա, որի պարտականությունն էր պաշտպանել ժողովրդի իրավունքն ու շահերը:

Ներկայումս «տրիբուն» բառը փոխաբերական իմաստով տրվում է այն գործչին, որն իր հրապարակախոսական կամ հռետորական ելույթներում պաշտպանում է սոցիալական որևէ խմբի իրավունքները:

ՄԻՐԱԺ

Այս երևույթը տեղի է ունենում անապատային կամ տափաստանային շրջաններում, հատկապես Սահարայում, որտեղ օդը զարմանալի մաքուր է, և մեջը ջրի գոլորշիներ չկան: Երբեմն անապատում ծարավից նվաղող ուղևորը տեսնում է ջրատար օազիս, շտապում է, բայց միրաժը ցնդում, անհետանում է:

Այսպիսով, միրաժը տեսողական պատրանք է, երևույթ. մարդ տեսնում է ոչ շոշափելի, իրենից հեռու գտնվող առարկաներ:

Փոխաբերական իմաստով «միրաժ» ասելով հասկացվում է թվացող, խաբուսիկ, երևակայությամբ ստեղծված պատրանք: Երբ մեկի մասին ասում են՝ «Միրաժների հետևից է ընկնում», նշանակում է՝ ձգտում է այնպիսի բաների, որոնք չեն իրականանալու:

ՖԻԱՍԿՈ

Այս արտահայտությունը, որ նշանակում է կատարյալ ձախողում, համաշխարհային բառապաշար է մտել իտալերենից: Իմաստը հավասար չափով հասկանալի է բոլոր ժողովուրդներին: Հետաքրքիրն այն է, որ «ֆիասկո» արտահայտությունը իտալերեն նշանակում է «շիշ»:

Այս արտահայտությունն այսպիսի պատմություն ունի: Անցյալ դարում Ֆլորենցիայում ապրում էր մի անվանի ծաղրածու՝ Բիանկոնելլի անունով: Նա հանդիսատեսների սիրելին էր, պաշտամունքի առարկան: Սովորաբար նա հանդես էր գալիս ձեռքին որևէ առարկա բռնած և սկսում իր ուրախ «երկխոսությունները»:

Մի անգամ դերասանը բեմ է բարձրանում՝ ձեռքին մի շիշ, բայց այդ օրը նա հանդիսատեսին չի կարողանում ծիծաղեցնել և փաստորեն ձախողվում է: Ներկաների հիասթափությունից վշտացած դերասանը շիշը խփում է գետնին՝ գոչելով, որ մեղավորն իր ձեռքի շիշն էր, այսինքն՝ «ֆիասկոն»:

ՎԵՏՈ

«Վետո» լատիներեն բառ է և նշանակում է՝ արգելում եմ: Միջազգային իրավունքի մեջ այս բառի հետ կապված հասկացությունն օգտագործվում է դեռ 18-րդ դարից:

Այս հասկացությանը հաճախ հանդիպում ենք Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, կապված Միավորված ազգերի կազմակերպության գործունեության հետ:

Դա հաճախ օգտագործվում է որպես «Վետոյի իրավունք»:

«Վետոյի իրավունք» են անվանում միաձայնության սկզբունքը մեծ տերությունների միջև, և սա Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության կարևորագույն սկզբունքներից մեկն է: Համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության 27-րդ հոդվածի՝ Անվտանգության խորհրդի որոշումները, բացի պրոցեդուրային հարցերից, համարվում են ընդունված, եթե նրանց օգտին քվեարկել են ոչ պակաս, քան ինը անդամներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի Հին և Միջին դարերի պատմության բաժինների վարիչների թափուր տեղերի համար

Համաձայն «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական պետական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 21 դեկտեմբերի 2023 թվականի N 2298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 30 հունվարի 2025 թվականի N 102-Ն որոշման՝ մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով՝

1) ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան.

2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն յոթ տարվա աշխատանքային ստաժ.

3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) հայագիտություն և հումանիտար գիտությունների մասնագիտություններով ՄԳՇ-ում համահեղինակել է առնվազն մեկ հրապարակում կամ մեկ մենագրություն.

4) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) հայագիտություն և հումանիտար գիտությունների մասնագիտություններով ՄԳՇ-ում ընդգրկված հոդվածներից առնվազն մեկում հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում՝ ուղղված ինստիտուտի տնօրենին,

բ) ինքնակենսագրություն,

գ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ՝ լրացված,

դ) լուսանկար,

ե) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,

զ) գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հավաստող փաստաթղթերի պատճենները,

է) վերջին հինգ տարիներին հրատարակված գիտական աշխատանքների ցանկը,

ը) բնութագիր վերջին աշխատավայրից:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտքարտուղարին՝ սույն հայտարարության հրապարակման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում՝ աշխատանքային օրերին:

Հասցեն՝ Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 24/4, հեռախոս՝ 010581931:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝ Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 25.02.2025 թ.:
Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: